

ՀՈԳԵՇՆՈՐՀ ՊՈՂՈՍ ՎՐԴ. ՏԵՐ-ՆՇԱՆՅԱՆԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

Պողոս վրդ. Տեր-Նշանյանը արդեն մեկ դարի ծանրություն ունի ուսերին, բայց շարունակում է ծեսեր կատարել և ներկա լինել Մայր Աթոռում կատարվող հանդիսություններին:

Այդ հարյուր տարիները լեցուն են ճակատագրի վերիվայրումներով՝ հայրենի բնօրրանից զրկվելուց, գաղթի ճանապարհին մահվան սարսափից մինչև Մայր Հայրենիքում, Սուրբ Գեղարդում և այլուր հոգևոր եռանդուն ծառայություն և այսօր՝ երջանիկ ծերություն:

1922-ին Կիլիկիայից Սիրիա անցնելուց հետո մտասևեռում է ունեցել Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք՝ կուսակրոն քահանայության ուխտով կյանքը իր ժողովրդին նվիրաբերելու: Նահատակ Տեր Նշան քահանայի որդին դաստիարակվել էր Հայ Եկեղեցու ծառայության ոգով և 1926-ին գնաց Երուսաղեմ՝ միաբանության շարքերն անցնելու:

1947-ին ներգաղթ Մայր Հայրենիք, հոգևոր ծառայություն տարբեր եկեղեցիներում և 1955՝ միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ լուսարարի օգնական, ապա Ս. Գեղարդ, ուր իր ծնողների հիշատակին աղբյուր-հուշարձան կառուցեց: 1957-ին վարդապետ: 1962 թ. Դարալագյազի Ս. Խաչ վանքի վանահայր և հետագա տարիներին անձնվեր ծառայություն:

Խմբագրությունը ձայնակցում է Մայր Աթոռի միաբանությանը՝ շնորհավորելով հոգեշնորհ հայր սուրբին իր հարյուրամյակի առթիվ և մաղթում է քաջառողջություն և բարօր կյանք՝ ի ծառայություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: